տրաց հովանոց, ամարանոց և զօրանոց դառնալ. ուր քրիստոնէութեան առաջին տարուց սկսած դեռ անմահ մնում են Թադէի և առաջին հայ քրիստոնեայ նահատակ կուսի Սանդուխտ արքայադստեր թափված արեան կաթիլների հետքերը, ուր հինգերրորդ տարումը, այսինքն Քրիստոսի 451 թ. 60 հազար քրիստոնեայ հայերը, Վարդան սպարապետի առաջնորդութեամբ, ոգևորված հայոց Նոր կրօնքով, պատերազմեցին հայոց հին կրօնքի դէմ: Այդ սրբավայրումը, ինչպէս նաև Ավաղուղումը և Գարայնիումը, այսօր ոչ մի հայ չի ապրում: Ցիշեալ խանութեանց մէջ, նոյնպէս Աւարայր դաշտի արևելեան գիւղերում, ինչպէս Գարագիլիսդին, Զորս, Բաստամ և այլն մնացած են միայն ահագին աւերակներ և ընդարձակ գերեզմանատներ:

Այս հայերից թափուր վայրերը պատելիս, ճանապարհորդը հանդիպում է միայն Նոյա յիշատակաց ուրվականին: Այստեղ մտաբերվում են Նահապետի և Գամառ-Քաթիպայի լուսնակի երգերը.

Երբ ես մօտեցել էի Սանդուխտ կուսի մատուռին, որ Թադէի վանքից երկու վերստ դէպի հարաւ հեռաւորութեան վերայ է գտնվում, յիշեցի Նոյնպէս հ. Ալիշանի «Կուսանք հայոց Նոր Շուշանը», նոյն ժամուն մտադիր եղայ յայտնել մեր մեծ. բանաստեղծին, որ Շաւարշան Նոր շուշաններ որոնողը, Նոր փշերի ու տատասկների կը հանդիպի, որովհետև այնտեղ այլ ևս չեն ապրում հայոց կու-